P. O. Box 10126, Burbank, California 91510
www.burbankcc.org
BCC.HolidayBaskets@gmail.com
(818) 679-2217
501c3 tax ID: 95-6116051

Օգոստոս 2021

Հարգելի ապագա կամավոր,

Մենք շատ ուրախ ենք, որ դուք ցանկանում եք մասնակցել Տոնական զամբյուղների կամավոր ծրագրին, ապա սեղմել այստեղ. https://www.burbankcc.org/volunteerformenglish: 88 տարուց ի վեր, Բրբենքի համագործակցության խորհրդի «Տոնական զամբյուղներ» ծրագիրը ֆինանսական օգնություն է ցուցաբերել տնտեսապես անապահով ընտանիքներին տոների ընթացքում: Բրբենքի քաղաքացիներն այս ծրագրի անբաժանելի մասն են կազմում: Հուսով ենք, որ կշարունակեք աջակցել այս ծրագրին:

Ո՞վ կարող է կամավոր աշխատել:
Ներկայումս ընդունում ենք բոլոր չափահասներին: Ընդունում ենք նաև 12-18 տարեկան անչափահաս կամավորներին: Նրանք պետք է միջանկյալ կամ միջնակարգ դպրոցի աշակերտ լինեն և աշխատեն ժամերը դպրոցական ծառայություն ժամերի դիմաց: (Ժամերի դիմաց ստորագրություն ստանալու համար պետք է դպրոցի կողմից փաստաթուղթ ներկայացնել:)

Ինչպե՞ս կարող եք օգնել:
Եթե դուք կամ ձեր կազմակերպությունը ցանկանում է կամավոր աշխատանք կատարել, խնդրում ենք հյուրընկալել Կամավորների արձանագրության էջը. https://www.burbankcc.org/volunteerformenglish և ընտրել թե ինչ և երբ կարող եք անել: Նույնիսկ եթե դուք կազմակերպության կամ խմբի մաս եք կազմում, դուք պետք է անհատապես արձանագրվեք:

Ի՞նչ է լինելու կամավոր աշխատանքի համար արձանագրվելուց հետո:
Արձանագրվելուց հետո, դուք հաստատման ապացույց կստանաք: Ձեր աշխատանքը սկսելուց 2 օր առաջ ձեզ կնախազգուշացնենք տեքստի միջոցով: Մենք ձեզ կսովորեցնենք, թե ինչ անել մինչև աշխատանքը սկսելը: Խնդրում ենք արձանագրվել այն օրերի և ժամերի համար, որը ձեզ հարմար է: Եթե դուք չներկայանաք, ապա կխոչընդոտեք մեր աշխատանքը: Խնդրում ենք լինել ճշտապահ:

Ձե՞ք կարող կամավոր աշխատել: Կարող եք այլ կերպ օգնել: Կցանկանա՞ք.
• Ֆինանսական օգնություն կատարել մեր կայքէջի միջոցով: Մենք ընդունում ենք PayPal, Venmo կամ Zelle:
o Անձնական չեկերը կարող եք ուղարկել մեր փոստային հասցեին վճարելով Burbank Coordinating Council-ին:
• Ձրի և թեթև խորտիկների նվիրատվություն կատարել կամավոր աշխատողների համար – սեղմել այստեղ արձանագրվելու համար:
• Ապրանքներ գնել Ամազոնի մեր ցուցակից: Կարող եք նաև գնել մեր կայքէջում նշված ապրանքները:
• Տեղադրեք մեր տեղեկատվական թերթիկներն ու տեղեկությունը սոցցանցերի ձեր էջերում:

Հարցեր ունե՞ք:
Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Հիլդե Գարսիային (818) 679-2217:
Մենք այնքան երախտապարտ ենք Բրբենքի համագործակցության խորհրդի «Տոնական զամբյուղներ» ծրագրում կատարած ձեր ծառայությունների համա: Նվիրատվություններ կատարելու ցանկությամբ մենք ավելի լուսավոր կդարձնենք տոները մեր համայնքի համար:

Շնորհակալություն ձեր օգնության համար: Ծրագրին հատկացրած ցանկացած օգնություն գնահատելի է և արժեքավոր:

Volunteer Letter Armenian- Updated August 29, 2021